

թիւնը, թէ ո՞ր աստիճանին Հայոց աւանդութիւնը, Երեւանի տափարակի տիրապետութեան մասին Հայաստանի նահապետների ձեռքով, զիտար և էական կէտերում համաձայն է Ուրարտեան օշխարակալութեան (Ըզար նախ քան զՔրիստոս) ճշգրիտ ընթացքի հետ, մենք կարող էինք ներածել Մ. Խոսրոսացւոյ յետագայ աւանդութիւնը Փեղամայ ծովի և յորա եղբրքի տիրապետութեան մասին. բայց զորա վրայ պատշաճ ենք համարում խօսելու փոքր ինչ յետոյ, երբ կանցնենք Փեօի—շայի յիշատակարաններին. իսկ առ այժմ այսքանս կը նկատենք, որ Մովսիսի Խորենացւոյ առաջին Գրքի ծՖ գլուխը շատ փոքր տարածութեան վրայ ներկայացնում է մեզ զարմանալի հանգամանքներ, որ յայտնի են մեզ այս երկրի ճշգրիտ պատմութիւնից հնազոյն ժամանակներում, Ը զարում նախ քան Քրիստոս. և առ հասարակ Հայոց աւանդական աշխարհակալութիւնների պատկերը միանգամայն քաղուած է Ուրարտեան աշխարհակալութիւնների ճշմարիտ պատմութիւնից՝ անձանց և վայրերի անունների նմանաձայնութեամբ հանդերձ: Ես տարակոյտ չունիմ, որ այս զլիս համար անհրաժեշտ մեկնութիւններ կարելի է քաղել մի միայն բեռնակիր արձանագրութիւնների տեղեկութիւններից: Ղուլիճանի [N^o. VII] արձանագրութիւնը.

« Խալդիւուն ես աղօթում էի, տիրոջ հօրին, որ տուա իւրկիսին երկիրն ընծայ Արդիշտին, ես ընծաներով մտածեայ խալդիւուն: Արդիշտի ասում է, ես նուանցի քաղաքն Գուրուբանի—երկիրն Կուլիսինի » *

Խ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆՑ

Շարչարեյի



ՀԱՅԿԱԿԱՆՔ

(տես յէջ 169)

Ե

Յայտնի է թէ բացառականը մեր հին լեզուին մէջ կը հիմնուի տրականին վրայ, կարելի է ըսել՝ կը կազմուի տրականէն. — քաղաքաց՝ ի քաղաքաց, այլուս՝ յայլուս, և այլն:

Արդ՝ ունենալով բացառական ի միոյն, կը սպասուի նաև միոյն տրականի մը՝ կազմուած ոչ մասնիկով, որ՝ ինչպէս յայտնի է՝ կը մանէ հին հայերէնի հոլովական կազմութեան մէջ ոչ կամ ջ ձևով, և կը ծառայէ շինելու բառի մը երբեմն սեռականը, երբեմն տրականը և երբեմն ալ այս երկուքը միասին: Այսպէս՝ կնոջ, գեղջ, սեռական և տրական. եկեղեցոյ՝ տրական (որմէ ներքոյական յեկեղեցոյ), և միոյն՝ սեռական:

Միոյն իբրեւ տրական չէ նշանակուած*. ասկայն մեր մատենագրութեան հնազոյն գործերուն մէջ կը գտնեմ մէկ—երկու հատուածներ՝ ուր միոյն իբրեւ տրական գործածուած է.

1. « Դէպ եղև քահանայի միոյն իջանել ընդ նոյն ճանապարհ » (Ղուկ. Ժ. 34):

2. « Երևեցաւ և ինձ իբրև անաբոյի միոյն » (Ա. Կոր. ԺԵ. 8):

3. « Խոստանամարտ մթերեալ էր ի տուարածափակի միոյն » (Ազաթ):

* Նշանաւոր հայկաբան հ. Արսէն Բազրատունւոյ « Ի պէտս զարգացելոց » յօրինած քերականութեան մէջ նշանակուած է անցողակի միոյն տրականն, որոյ օրինակ բերուած են, « Խօսեցայ զձեզ առն միոյն », « Մանկան միոյն փութու աստեղ », « Մի միոյն զգառնել խորհուրդ », և. այլն. (տես Հայ. քերական. ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1832. էջ 42, համար 93):

Խ. Խ.
* Այն վկայութիւնը մենք տարբեր կերպով կ'ընթերցենք մեր առաջին Ազաթանգեղոսի մէջ. « Ի զուարափակ քաղաքորմի միոյն խոստահամար մթերեալ էր » (Վէն. 1862. Գ. էջ 46):

էր տեսնուի ուրեմն՝ թէ միոյ իրրև արա-
կան անշուշտ գոյութիւն ունեցած է հին ա-
տեն, և հինգերորդ դարուն կորսուած է՝ ցան-
ցառարար քանի մը հետքեր միայն ձգելով:

2

Հետեւեալը թարգմանութիւնն է իմ մէկ
յօդուածիս՝ զոր այս օրերս կը հրատարակէ
Mémoires de la Société linguistique de
Paris, 1897: Թողա՞ծը կը խօսի լեզուա-
բանական օրէնքի մը մասին՝ դիտուած մաս-
նաւորաբար նոր հայերէնի մէջ: Այդ օրէն-
քը՝ զոր կարելի է կոչել օտարանմանութիւն
կամ կաղապարում, օտար բառի մը ազդե-
ցութեան տակ բնիկ բառին այնպիսի ձև մը
կու տայ, որ մարդ փոխառութիւն կը կարծէ
զայն: — Ուրեմն երբ լեզուի մը մէջ խումբ
մը բառեր փոխառութիւն համարուին շատ
ցեղակից և մերձաւոր լեզուէ մը, ուրիշ է
կասկածանքով վարուիլ այդ բառերուն հետ,
մի գուցէ օտարանման բառեր ըլլան անոնք
և ոչ թէ զուտ փոխառութիւն:

Օրինակ՝ հին իրանեան լեզուներէն փոխ-
առութիւն համարուած հայերէն բառերը,
որոնց մէկ մասը եթէ նախալեզուէն ալ
իշխէր մեզի՝ իրանականին մերձաւոր ձև մը
պիտի ունենար և անոր ազդեցութեան տակ
պիտի առնէր իրանական ձևը. և հետեւաբար
պիտի համարուէր այսօր փոխառութիւն, թէ և
իրօք այնպէս չէ:

Բաւերա՞ս օտարանմանութիւն հայերէնի մէջ

Երբ երկու լեզուներ իրարու հետ հաղոր-
դակցութեան մէջ են, և նոյն իմաստն յայտ-
նելու համար ձևով իրարու շատ նման բա-
ռեր ունին, այդ բառերէն մին իրնայ ազդել
միւսին վրայ և ձևափոխել զայն:

Այս բանը կարելի է կոչել օտարանմա-
նութիւն կամ կաղապարում (croisement
des mots):

Թաշուրդ օրինակներն առնուած են պոլսա-
կան խօսուած բարբառէն.

1⁰. Հին հայերէնն ունէր իրանականէն
փոխ առնուած տախտակ (taxtak) բառ մը՝

որ ձայնակա՛ն շատ հին փոփոխութիւնով մը
եղաւ *daxdak* (սեռ. *daxdagē*), ձև՝ որ կը
գտնուի այսօր գրական լեզուին մէջ: Իրա-
նեան բառը պարսկերէնի մէջ առնչով
taxta ձև մը, նոյն *taxta* ձևով անցաւ յե-
տոյ թուրքերէնի. իսկ թուրքերէնը ժողովրդ-
գական հայ բառին վրայ ազդելով՝ ըրաւ *tax-
dak* (սեռ. *taxdagē*)՝ սալով անոր նախա-
տառ տն՝ առանց սակայն ուրիշ փոփոխու-
թիւն մ'ընելու:

2⁰. Նմանապէս իրանականէն փոխ առ-
նուած հին հայերէն պանիր (panir) նոյն
ձայնական փոփոխութիւնով եղաւ *banir* (գրա-
կան ձև). թուրքն ունենալով *peynir* (պարս-
կերէնէ փոխառութիւն), հայ ժողովուրդին իր
բառը կը հնչէ *panir* փոխանակ *banir*ի:

Այս երկու օրինակներուն մէջ թէ հայ
և թէ թուրք բառերը նոյն ծագումն ունին.
յաջորդ երկու օրինակներուն մէջ բառերուն
նմանութիւնը բոլորովին պատահական է:

1⁰. Հին հայերէնն ունէր սեղմել (*sexmēl*)
բառ մը՝ որ յետոյ թէ՛ գրական և թէ՛ ժո-
ղովրդական լեզուին մէջ եղաւ *segmēl* կամ
sexmēl: Թուրքերէն *se'ke*, *se'kmak* բա-
ռը, որ հոմանիշ է հայերէնին և զոր հայերն
ու փոքր — Ասիայի թուրքերը կ'աղոթասանեն
se'xē, *se'xmax*, ազդեց հայ ձևին վրայ
և ըրաւ *սեխմէլ*:

2⁰. Ինչ որ ամբողջ բառի մը համար է,
նոյնը նաև անոր մէկ մասին համար է. օ-
րինակ. ժադիկ՝ հին հայերէն *caḏik*, նոր
հայերէն *jagik* (սեռ. *jagigē*) թուրքերէն
diček: Երկուքն ալ գրեթէ նոյն վերջաւա-
րութիւնն ունենին, ուստի օտարանմանու-
թեան օրէնքով ժադիկ եղաւ ժադիկ:

Աւելի զարմանալի պարագայ է հետեւեալը.
Թուրքերէնը հայերէնէն փոխ կ'առնու օ-
րինակ բառը և իր ձայնական օրէնքով կը
հնչէ *կորիւնէք*. այդ հնչումին ազդեցութեան
տակ հայ ձևը կ'ըլլայ *կորիւնէկ*:

Ե

Առդի հայերենի յատուկ և շատ գործա-
ծական բառ մըն է *պզտիկ* = փոքր. որ կայ
նաև արիւելեան հայերենի մէջ *պստիկ* ձևով:

հմմա. « պատիկ է, քայց լստիկ է », ուս-
տահայ առածը : Մեր մէջ բառն առած է
բազմաթիւ փաղաքական ձևեր՝ մանկական
տրուստանութեան յարմարցուելով. այսպէս՝

Նախ ջնջելով վերջի մասնիկը՝ պզտիկ և
յետոյ ասկէ տիկ ու լիկ մասնիկներով՝
պզտապիկ, պզտիլիկ (տիկ, լիկ. հմմա. ման-
տրտիկ, միկիլիկ, մենտիլիկ, սենտիլիկ. և
այլն) : Դարձեալ զ ստոր յայտուելով՝ պտտիկ
և պտիլիկ :

Իսկ բոլոր այս բառերուն մէջ զսնուած
ընթեր իի վերածելով՝ հաւաստարպէս, —
պիգտիկ, պիգտի, պիգտիտիկ, պիգտիլիկ
պիտիտիկ, պիտիլիկ :

Ամփոփելով այս ամէնը՝ կ'ոճնեանք տաս-
երկու ձև միևնոյն բառին համար .

պզտիկ	պիգտիկ		
պզտի	պիգտի		
պզտապիկ	պիգտապիկ	պտտիկ	պիտիտիկ
պզտիլիկ	պիգտիլիկ	պտտիլիկ	պիտիլիկ

Ի նշ է այս բառին ծագումը :

Պարսկերէն կայ پست (pest) ձև մը՝ որ
կը նշանակէ 1^o. ցած, կարճ, կարճահասակ .
2^o. խոտորհ, ցած, անաղնիւ, ստորին, ա-
յաւ. — որմէ՛ ցած պէտտ, խոտորհութիւն ,
ստորնութիւն, ցածութիւն . پست پست پست պէտտ
կերդէն, խոտորհեցնել, ընկճել, նուանել .
Vullers. Lex. Pers. — Lat.

Պարսիկ բառին զործածութիւնը ճիշդ հա-
մաձայն է մերինին. հմմա. հետեւեալ օրի-
նակներուն մէջ .

چراغ پيش آفتاب نوری ندهد وماره بلند
در دامن کوه الوند

Ճրագն արևին առջև լոյս չի տար, և բարձր
մինարէն Ալվանդ լեռան առջև պզտիկ կ'ե-
րևայ. (Սասդի. Գիշիշտսան. Յաւաջարան) :

بیمارم بمرای کینه چون پیل مست
مر آن کوه بزمایه را کرد پست

Նոյն քինով եկաւ կառազած փիղի պէս և
այն մատակ կողմ ոտքին տակ առաւ (պզտիկ
բանի մը պէս) . Շահ. :

بر قدر عرش آسمان است

Իր բարձրութեան առջև երկինքը պզտիկ
է :

Պարզ է թէ հայ բառը պարսկերէնէ փոխ-
առութիւն է : Մեր հնագոյն ձևն է պտտիկ
(համեմատ տառադարձութեան) կարգա՝ pstitik՝
ինչպէս պահուած է մինչև հիմայ ուսա-
հայերէնի մէջ : Իսկ երբ արևմտեան հայե-
րուն մէջ խուլ պ (p) և տ (t) տառերը փո-
խուցան եղան հնչուն ծ և ժ, ս ևս վե-
րածուեցաւ զի :

Ը

Ժողովրդական « խժժուն » բառին տեղ
անշուշտ կ'սպասուէր աւելի կանոնաւոր խառն
ձև մը՝ հին հայերէնի յխառն բառին դիմաց :
Այս անկանոնութեան մեկնութիւն մը չէ
տրուած լեզուաբաններէ :

Արդ՝ ինչպէս որ ուրբ բառին անկանոն
ըր յառաջ եկած է եօթը, ինը, տասը կա-
նոնաւոր ձևերէն, նոյնպէս ալ մեր խժժուն
ձևին անկանոնութիւնը յառաջ եկած է յա-
ջորդ վաքսռն և ռքսռն թուական ամական-
ներուն ազդեցութենէն, որոնք ժողովրդական
լեզուին մէջ կը հնչուին վաժժուն, ռաժժուն՝
ընդհանուր և սովորական օրէնքին համեմատ
բա խումբը վերածելով կրկին ժի. հմմա.
թուրքերէն բիքսիւ, եսքսը բառերը հայ-
կական արտասանութեան մէջ՝ բիաժժիւ,
եսաժժիւ :

Հրաշնայ Յ. Աճառեան

